



« 31 » *Տարբեր* 2022թ. *ՆԳՇԻՄ-459*

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ՆԱՐԵԿ ՏԵՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տերյան,

Ձեզ ենք ներկայացնում «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև 2022թ.-ի փետրվարի 22-ին կնքված «Անտենային էտալոնների պահպանման և զարգացման ծառայությունների» մատուցման պետական գնման պայմանագրի (ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-22/10) համաձայն 2022թ.-ի 1-ին եռամսյակի Հաշվետվությունը:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Տնօրեն

Ժամանակավոր պաշտոնակատար

ՎԼԲԵՐՏ ԲԱՐԱՅԱՆ

Կատարող՝
Ն. Խաչատրյան
Հեռ. (010)232600 (152)

Մասնագիտացված կազմակերպությունների կողմից «Անտենային էտալոնների պահպանման և զարգացման ծառայությունների» մատուցման պետական գնման պայմանագրի (<< ԷՆ-ՄԱԾՁԲ-22/10) համաձայն՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությունում 2022թ. առաջին եռամսյակում կատարված աշխատանքների

Հաշվետվություն

Կազմվել է 2022 թվականին նախատեսվող անհրաժեշտ աշխատանքների ցանկ և օրացույցային պլան:

Ստուգվել է լաբորատոր պայմաններում ԳԷՊԻ-0,25; ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1 և ԳԷՊԻ-2 ազգային չափանմուշային անտենաների աշխատանքն ապահովող սարքերի (գեներատորների, նախնական և լոգարիթմական ուժեղարարների, ազիմուտալ հարթակի պտույտն ապահովող սնուցման բլոկի) աշխատունակությունը:

Գնահատվել են ԳԷՊԻ-0,25; ԳԷՊԻ-0,5; ԳԷՊԻ-1 և ԳԷՊԻ-2 ազգային չափանմուշային անտենաների ճառագայթման դաշտի լարումների հարաբերության բաշխվածության միավորների վերարտադրման (փոխանցման) արդյունքները՝ 2021 թվականին կատարված չափումների հիման վրա արտահայտված արդյունքների գումարային ստանդարտ անորոշությամբ՝ չափումների չբացառված սիստեմատիկ սխալների առկայության դեպքում: Չափման արդյունքների անալիզը ցույց է տալիս, որ չափանմուշային անտենաների չափագիտական պարամետրերը, բնութագրերը և ճշտությունները բարձր են, և չափանմուշների տեխնիկական հնարավորություններն ապահովում են չափանմուշի չափի փոխանցման և պահպանման նախընտրելի պայմանները:

Հաշվարկվել և նախագծվել է ԳԷՊԻ-1 ազգային չափանմուշային անտենայի 10 սմ ռադիոալիքային տիրույթի համար նախատեսված նոր կատարելագործված ռուպորային ճառագայթիչը:

Հետազոտվել են ալեհավաքների չափագիտական համալիրներում երկհայելային առանցքային համաչափությամբ սֆերիկ համակցված ալեհավաքի օգտագործման հնարավորությունները, որը կարող է լավագույնս օգտագործվել ալեհավաքների չափագրման ժամանակ: Որպես առավելություն կարելի է նշել, որ այդպիսի սիստեմայի հիմնական սֆերիկ հայելին ունի մի շարք առավելություններ պարաբոլիկ հայելու համեմատությամբ. այն է՝

անդրադարձող մակերեսի վերահսկման, ատեստավորման, բարձր ճշգրտությամբ պատրաստման պարզությամբ:

Մշակվող անտենան հաճախականությունից անկախ ապահովելու է բարձր համաձայնեցում փողային ճառագայթիչի և հիմնական հայելու հետ, ինչը կհեշտացնի անդրադարձող մակերեսի կառավարումն ու ատեստավորումը:

Մշակումը ներառում է նաև.

1. Երկրորդական հայելու և կիզակետի դիրքերի ճշգրտում:
2. Երկրորդական հայելու չափերի հաշվարկում գլխավոր հայելու տվյալ տրամագծի և շրջանաձև ծնիչի կորության շառավիղի համաձայն:
3. Երկրորդական հայելու պատրաստման համար անհրաժեշտ կորոդինատների հաշվարկում:
4. Անտենայի հիմնական բնութագրերի հաշվարկում:

Արագածի գիտական կենտրոնի տարածքում կատարվել են չափանմուշների շրջակայքից ձյան հեռացում և սանիտարական աշխատանքներ:

**«Ստանդարտացման և
չափագիտության
ազգային մարմին» ՓԲԸ-ի
տնօրենի տեղակալ՝**



ԱՐՄԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ